

## Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻԾԱՆԻ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ «ԲԱԶՄԱՎԷՊ»Ի ԷԶԵՐՈՒՄ

Հ. Ղեւոնդ Ալիշանը հայագիտութեան հանրագիտարանային դէմքերից է: Նա ե՛լ բանաստեղծ է, ե՛լ հմուտ բանասէր, ե՛լ պատմաբան, ե՛լ տեղագիր, ե՛լ յայտնի թարգմանիչ, նա եղել է նաեւ «Բազմավէպ»ի երկրորդ խմբագիրը՝ 1848-1851 թթ.<sup>1</sup>: Ղ. Ալիշանի գործերի համակարգումը նաեւ հայկական ճարտարապետութեան տեսութեան հարց է, որ լրացնում է բնակավայրերի եւ յուշարձանների տեղագրութեան տուեալները: Ներկայացուող հաղորդման նպատակն է վերլուծել Ղ. Ալիշանի «Բազմավէպ»ում հրատարակուած տեղագրական յօդուածների տեղն ու նշանակութիւնը նրա ժառանգութեան մէջ: Այդ կապակցութեամբ գիտական խնդիրներ են՝ բացայայտել Ղ. Ալիշանի տեղագրական հրատարակութիւնների ծրագիրը, մեթոդը, գործընթացն ու արդիւնքները: Մինչեւ օրս ալիշանագիտութեան մէջ եղել են բազմաթիւ բովանդակային եւ ցանկագրական աշխատութիւններ, բայց այդ աշխատութիւնների հրատարակման ընթացքը ճշտող հետազոտութիւնը, յատկապէս յօդուածների կապակցութեամբ դեռեւս պէտք եղած ուշադրութեան չի արժանացել, որ գոնէ հայկական ճարտարապետութեան տեսութեան կտրուածքով բացակայում է:

Մեթոդական առումով Ալիշանի տեղագրական աշխատութիւնների հենքը, որքան էլ ժ.թ. դարի քաղաքական իրավիճակով է, այնուամենայնիւ այն հիմնականում մնում է Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»ի հիմքերով: Փաստօրէն ներառում է Պատ-

1 «Բազմավէպ»ի խմբագրի պաշտօնը առաւելագոյնս եռամեայ գործունեութիւն է, բացառելով Հ. Աթանաս Տիրոյեանի (1883-1888 թթ.), Հ. Ղեւոնդ Տայեանի (1921-1927 թթ.) եւ Հ. Եղիա Փէչիկեանի (1930-1939 թթ.) համեմատաբար երկար պաշտօնավարման տարիները, որոնք կրկնակի կամ եռակի աւելի են:

մական Հայաստանի 15 նահանգները<sup>2</sup>, յաւելեալ 5 աշխարհագրական տարածքներ եւս, ինչպէս՝ Կիլիկեան հայկական թագաւորութեան տարածքը, Հայաստանից դուրս ծաւալուած հայկական գաղթավայրերը<sup>3</sup>, ինչպէս նաեւ՝ Աղուանքը, Փոքր Հայքը, Նախիջեանը: Այնպէս որ Ղ. Ալիշանի աշխատութիւնների աշխարհագրական սահմանները ներառում են 20 տարածքներ:

Ղ. Ալիշանի՝ նշուած տարածքների տեղագրական ուսումնասիրութիւնները բովանդակային առումով կարելի է բաժանել ստորեւ ուսումնասիրուող երեք տեսակի: Առաջինը տեղագրութիւնների ներածական աշխատութիւններն են: Երկրորդը տեղագրական գործերի հիմնադրոյթների մակարդակով:

«Բազմավէպ»ում հրատարակուած յօդուածները կամ հաղորդումներն են: Երրորդը Պատմական Հայաստանի առանձին նահանգներին նուիրուած տեղագրական հատորներն են:

1. Ղ. Ալիշանի տեղագրութիւնների՝ պատմական եւ աշխարհագրական սահմաններով պայմանաւորուած աշխատութիւնները թուով հետեւեալ երկուսն են.

1.1. «Նշմարք եւ նշխարք Հայաստան աշխարհի» աշխատութիւնը, որ Ղ. Ալիշանի տեղագրութիւնների աշխարհագրական ուղեցոյցն է: Այն քարտեզի վրայ Հայաստանով, յարակից շրջաններով եւ միջնադարեան կարաւանային մայրուղիների ծիրով կատարուած երեւակայական ճանապարհորդութիւն է, որ, սկսելով Վոսփորից, աւարտում է Կարսում<sup>4</sup>: Փաստօրէն գիրքը, նախքան հրատարակութիւնը, 24 մասից կազմուած յօդուածաշարի ձեւով լոյս է տեսել «Բազմավէպ»ում<sup>5</sup>:

2 Ըստ «Աշխարհացոյցի» Մեծ Հայքն ունի հետեւեալ նահանգները՝ Բարձր Հայք, Ծոփք, Աղձնիք, Տուրուբերան, Մոկք, Կորճայք, Պարսկաստան, Վասպուրական, Սիւնիք, Արցախ, Փայտակարան, Ուտիք, Գուգարք, Տայք, Այրարատ: Գաւառների հետ տե՛ս Վիքիպեդիա, «Աշխարհացոյց». <https://hy.wikipedia.org/wiki/Աշխարհացոյց>:

3 Ա.ԻՇԱՆԻ ՂԵՒՈՒՄԻ, *Կամենից Տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռումինիոյ, Վեներիկ, Սր Ղազար, 1896*:

4 Ա.ԻՇԱՆԻ ՂԵՒՈՒՄԻ, *Նշմարք և Նշխարք Հայաստանի, Վեներիկ 1870*:

5 Ա. Վոսփորէն դէպի յունական արևելք Սեւ ծովի, յետոյ՝ Փոքր Ասիա, Միջերկրական («Բազմավէպ» 1862, էջ 65-71 (այսուհետև կնշուեն միայն յօդուածի տարիքն եւ էջերը)): Բ. Սիմոյ եւ Գ. Տրապիզոն (1862, 97-102): Դ. Տրապիզոնից դէպի Էրզրում մայրաքաղաք, Ե. Գիւմշեանէ, Բարերդ, Զ. Վարզուհան (1862, 129-132): Է. Բարերդ, Ը. Բարերդէն Կարին, Թ. Հազարական (1862, 161-165): Ժ. Կարնոյ դաշտ, ԺԱ. Կարնոյ գաւառ կամ Բարձր

1.2. «Տեղագիր Հայոց Մեծաց»ը<sup>6</sup>, Ղ. Ալիշանի տեղագրութիւնների պատմաաշխարհագրական հիմնաքարն է: Այն հետեւելով Հ. Ղուկաս Ինճիճեանին՝ բնակավայրերի փաստագրման նոր շրջանի իրադրութեամբ է: Որտեղ Հայաստանը բաժանուած է Ռուսական, Օսմանեան կայսրութիւնների եւ Պարսկաստանի միջեւ: Ինչպէս երեւում է «Տեղագիր Հայոց Մեծաց»ի բովանդակութեան ստորեւ ներկայացուած սխեմայից, Ղ. Ալիշանի առանձին հատորներով հրատարակուած տեղագրութիւնները հիմնականում Ռուսաց Հայաստանի տարածքից են, ներառեալ՝ Միսականը (1893 թ.), Այրարատը (1890 թ.), Ինչպէս նաեւ դրան մաս կազմող սահմանային Շիրակը (1881 թ.): Նշուածների թուին աւելի ուշ աւելացել են նաեւ Նախիջեանն ու Ղարաբաղը:

**«Տեղագիր Հայոց Մեծաց»ի բովանդակութիւնը**  
(անունների ուղղագրութիւնը՝ ինչպէս Ղ. Ալիշանի մօտ)

<p>1. Օսմանեան Հայաստան</p> <p>Ա. Ղարս գաւառ (ներառեալ Անի ֆաղաք՝ յուշարձաններով)</p> <p>Բ. Էրզրում նահանգ (Բաքերդ, Համշէն-Արդուն-Արտանուջ, Երնջակ-Կամախ)</p> <p>Գ. Խարքերդ (Արդնի, Ակլ)</p> <p>Դ. Դիարբեքի նահանգ</p> <p>Ե. Գաւառ Մուշ եւ Բաղէշ, Խլաթ-Մալազկերտ</p> <p>Զ. Պայազիտ գաւառ</p> <p>Է. Վան նահանգ (Արծկե-Արնէշ-Վան)</p> <p>Ը. Քիւրտիստան (Մոկեփիւրտիստան)</p>	<p>2. Պարսիկ Հայաստան</p> <p>Ա. Հայկական նահանգ պարսից</p> <p>Բ. Ատրպատական նահանգ</p>	<p>3. Ռուսաց Հայաստան</p> <p>Ա. Սումխէթ կամ Վիրահայք</p> <p>Բ. Հայկական նահանգ՝ Այրարատ, Էջիածին, Երեւան, Գառնի,</p> <p>Գ. Գեղարքունի, Սոթք-Վայոց ձոր, Նախիջեան, Գանձակ</p> <p>Դ. Գարապաղ կամ Շուշի, Շաքի Շիրուան</p> <p>Ե. Շեքի նահանգ</p> <p>Զ. Շիրուան նահանգ</p> <p>Է. Թալիշ նահանգ</p> <p>Ը. Պաքու նահանգ</p> <p>Թ. Գուլպա նահանգ</p> <p>Ժ. Դարբանտ</p>
---	--	--

Հայք, Արծն) (1862, 193-198): ԺԲ. Կարնոյ ֆաղաքի մօտերքը եւ ԺԲ. Կարնոյ նկարագրականը (1862, 225-231): ԺԴ. Մեկնում Կարնոյ Դավրիժու դոնէն դէպի Բասնն, ԺԵ. Հասանֆալէ, ԺԶ. Յովհան վանք կամ Ակսիգոմս, ԺԷ. Զոպան Կերպրիսու (1862, 257-262): ԺԸ. Աւնիկ, ԺԹ. Իշխու կամ Իշխս (1862, 289-292): Ի. Ստորին Բասնայ կամ Մժնկերտ (1862, 321-324): ԻԱ. Կարսից մինչեւ Արփաշայ: ԻԲ. եւ ԻԳ. մասերը (1862, 353-357):

6 Ա.Լ.ԻՇԱՆ Ղ.ԵԻՈՆԻ, *Տեղագիր Հայոց Մեծաց*, Վնենտիկ 1855:

2. Ղ. Ալիշանի «Բազմավեպ»ում հրատարակուած յօդուածները կամ հաղորդումները կարելի է տեսակաւորել երկու խմբի: Առաջին խումբը ընդգրկում է այն յօդուածները, որոնք, մշակում անցնելով «Բազմավեպ»ում, յետագայում ներդրուեցին Ալիշանեան ամբողջական մեծ աշխատութիւններում: Մինչդեռ երկրորդ խումբը ընդգրկում է «Բազմավեպ»ում հրատարակուած, բայց իրենց պատկանած նահանգներով առանձին հատորների չվերաճած յօդուածները: Առաջին խմբի յօդուածները, արտացոլուած լինելով սոյն հաղորդման երրորդ մասում, այստեղ առանձնապէս կանդարդառնանք երկրորդ խմբի յօդուածներին:

Ինչպէս երեւում է վերեւում բերուած աղիւսակից, այստեղ ընդգրկուած յուշարձանները առանձնապէս Օսմանեան Հայաստանի տարածքներից են, որոնց ուսումնասիրութիւնը «Բազմավեպ»ի էջերից միւս կողմ չի անցել: Ուղղակի Շիրակի կամ Կարսի գաւառի տարածքները, սահմանակից լինելով Ռուսական Հայաստանին եւ ընդգրկուած լինելով Այրարատի նահանգի կազմում, թէկուզ եղել են Օսմանեան Հայաստանի կազմում, արտացոլուել են Շիրակի հատորում: Մինչդեռ Օսմանեան Հայաստանի միւս տարածքները Փոքր Հայք, Բարձր Հայք, Վասպուրական ու Տուրուբերան նահանգներով (տես աղիւսակը), մնացել են Հայոց Մեծացի սահմաններում եւ ամբողջական հատորների վերաճելու բախտը չեն ունեցել: Լաւագոյն դէպքում դրանք որոշ յօդուածներով արտայայտուել են միայն «Բազմավեպ»ում, ինչպէս օրինակ Ծոփքը<sup>7</sup>, հայկական գաղթավայրերի եւ յարակից տարածքների մի շարք յուշարձանները, ինչպէս օրինակ «Պատմութիւն Կափայի» տեղագրութիւնը, «Վերափոխման եկեղեցի» եւ այլն<sup>8</sup>: Այս առումով առանձնապէս ուշագրաւ է «Բազմավեպ»ում տպագրուած Ղ. Ալիշանի՝ Աղուանքին նուիրուած յօդուածաշարը<sup>9</sup>: Այն, մնալով անտիպ, «Բազմավեպ»ում յօդուածի ձեւով հրատարակուել է յետմահու:

3. Ղ. Ալիշանի ամբողջական տեղագրական հատորներով հրատարակուած աշխատութիւնները. այս հրատարակութիւններն ըստ էութեան տարբերակուած են մեծ գիտնականի կենդանութեան տարիներին տպագրուած, ինչպէս նաեւ յետ մահու լոյս տեսած գործերից: Հ. Ղ. Ալիշանի հրատարակուած տեղագրական հատորներից

7 «Բազմավեպ», 1893, 101-122:

8 «Բազմավեպ», 1892, 214-220:

9 «Բազմավեպ», 1972, 343-356, 509-517 եւ այլն:

Կիրիկեան ուսումնասիրութիւնները կամ «Սիսուան»ը համառօտակի եւ հիմնադրոյթներով մինչեւ գիրք դառնալը ներկայացուած է «Բազմավէպ»ի 1885 թ. չորրորդ համարում (էջ 289-405): Իսկ «Սիսական»ը կամ Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհին հատորը՝ նոյնպէս իր առանձին մասերով կամ հիմնահարցերով արտացոլուած է «Բազմավէպ»ի 1891 թ. 321-336 էջերում:

Ալիշանի ամենասիրուած գործերից են Շիրակի տարածքի առանձին բնակավայրերին եւ յուշարձաններին նուիրուած յօդուածները: Յատկապէս այն Անիի մասով 1840-ականներին սկզբում արտացոլուած լինելով «Բազմավէպ»ում, այնուհետեւ տպագրուել են «Հայոց Մեծաց»ում: Բայց այն մինչեւ առանձին տեղագրական հատոր դառնալը կրկնակի մշակում են անցել «Բազմավէպ»ում, ինչպէս՝ «Կարս»ը (1864, 219-224, 249-256), «Անի»ն (1864, 280-287), «Անիի Մայր տաճարը» (1864, 315-319), «Նաղշուռն կամ Տիգրան Յոննցի Ս. Գրիգոր եկեղեցին» (1864, 337-382), «Անիի միւս եկեղեցիները» (1865, 58-65), «Հոռոմոսի վանքը» (1865, 119-125) եւ այլն:

Արարատում իր վիճակներով լոյս տեսած, բայց աշխարհագրութեամբ չներկայացուած նիւթ է Նախիջևանը: Այն աշխարհագրական մասով Ալիշանի կողմից լոյս է տեսել «Բազմավէպ»ի 1892թ. համարներում, որ կրում է

«Աշխարհագրական, քաղաքական եւ գիւղատնտեսական՝ ստորագրութիւն՝ Նախիջևանու, Որդուատու եւ Դարալաղզի վիճակաց՝ վերնագիրը: Յօդուածաշարում ընդգրկուել են հետեւեալ ենթաթեմաները՝ 1. Աշխարհագրական բնութագրումներ (15-26): 2. Հարստութիւն (111-116): 3. Պարտիզագրութիւն (157-164): 4. Ջրադմուխ (220-222, 261-271): 5. Արհեստներ (278-290): 6. Ազգահամար (409-412, 436-444), 7. Այլ կամ ժողովրդագրութիւն, վարժարան (533-544) եւ այլն:

Ալիշանի վախճանից յետոյ «Բազմավէպ»ում շարունակուած են հրատարակուել նրա գործերը: Յատկապէս կարեւորում է Արցախի տաղնապի տարիներին «Բազմավէպ»ում վերատպուած գործերը: Այդ թւում են, վերեւում նշուած Նախիջևանի հետ նաեւ՝ «Տեղագրութիւն Հայաստանի Արցախ»ը<sup>10</sup>, «Ուտիք»ը<sup>11</sup>, եւ այլն:

10 «Բեզմավէպ», 1988, 228-277 եւ 1989, 186-221:

11 «Բազմավէպ», 1990, 73-101, 346-366. 1991, 159-174, 403-417 եւ 1992, 163-201:

## Եզրակացութիւն

Հ. Ղեւոնդ Ալիշանի՝ Հայաստանի նահանգներին եւ հայկական գաղթավայրերին նուիրուած տեղագրութիւնները այսօր ազգային ժառանգութեան նշանակութիւն ունեն: «Շիրակ»ը (1881), «Այրարատ»ը (1890), «Սիսական»ը (1893), «Սիսուան»ը (1899), «Կամենից Տարեգիրք»ը (1896) եւ այլ գրքերը, հայկական յուշարձանագիտութեան, քաղաքաշինութեան եւ լանդշաֆտի ուսումնասիրութեան նուիրուած դասական գործեր են: Մեթոդականօրէն, դրանք մինչեւ հայկական բնակավայրերի եւ յուշարձանների ճարտարապետական փաստագրութիւններով հարուստ ամբողջական հրատարակութիւն դառնալը սկզբում՝ ներածական մակարդակով, ծրագրուել են «Տեղագիր Հայոց մեծաց»ում (1855), «Նըշմարք եւ Նշխարք Հայաստան աշխարհի»ում (1870) եւ այնուհետեւ էսքիզային սկզբունքով կամ յօդուածաշարերով սկզբում արտացոլուած են «Բազմավէպ»ում, յետոյ նոր՝ վերածուել են ամբողջական հատորների: Նկատելի է, որ տեղագրական հատորների վերածուած գործերը բացարձակապէս Ռուսական Հայաստանի տարածքներից են: Մինչդեռ, բացառութեամբ Շիրակի, Օսմանեան Հայաստանի նահանգների տեղագրութիւնները, չվերաճելով առանձին հատորների, որպէս յօդուածներ մնացել են «Բազմավէպ»ի էջերում:

Ղ. Ալիշանի՝ «Բազմավէպ»ում լոյս տեսած տեղագրական յօդուածները, հրատարակութիւնների մի փունջ են, որոնք անմիջական շարունակութիւնն են կազմում վերեւում նշուած հատորների: Բարձր Հայքի (1860-1870), Նախիջևանի (1892), Կաֆայի (1892), Ծոփքի (1893), Աղուանքի (1972) եւ Արցախի (1988, 1993) վերաբերեալ «Բազմավէպ»ում հրատարակուած յօդուածաշարերը յետագայ հետազօտութիւնների ուղեծրերն են, որոնք ընթացան եւ ընթանում են հայոց յետ-Ալիշանեան տեղագրական ժամանակաշրջանում:

ԳԱԻԻԹ ՔԵՐԹՄԵՆՁԵԱՆ

### Summary

## FR. GHEVOND ALISHAN ARTICLES DEALING WITH ARCHITECTURE WHICH ARE PUBLISHED IN “BAZMAVEP”

DAVID KERTMENJIAN

KEY WORDS: F. Ghevond Alishan, Bazmavep, Architecture, topography, theory, Sisakan, Siswan, Ayrarat, Shirak, Aghvank, Karabagh, Nakhijevan.

The toponymal works of Ghevond Alishan are in terms of national tradition for Armenian Architecture today. The books of “*Shirak*” (1881), “*Ayrarat*” (1890), “*Sisakan*” (1893), “*Siswan*” (1899), “*Kamenec’Annuals*” (1896) and others are lading classical works of historical monuments, town planning and landscape studies. They passed certain methodical development process until the last publication as complete research. In fact at the beginning they programed as land marks of geographical and historical entities of Armenian culture in the content of brief studies such as “*Toponymal of Armenian lands*” (1855), as well as “*landmarks of Armenia*” (1870). Successively the main land marks approbated in the official journal of Bazmavep as series of articles by their main problems, objectives etc. Notable that all above mentioned researches which were published as terminated books belong to the territories of Russian Armenia, as it was accepted to name at the XIX c. But the other studies which are from Ottoman Armenian region remained as articles included in Bazmavep journal of studies.

The above mentioned toponymal articles published in Bazmavep journal by Ghevond Alishan, logically are the continuation of the published volumes. In reality the articles dedicated to the study of “*Bardzr Hayk (Higher Armenia)*” (1860-1870), “*Nakhijevan region*” (1892), “*Sophene*” (1893), “*Aghvank area*” (1972), “*Artsakh*” region etc., were and are in the term of future armenologic studies conducting the toponymal-s of Architecture and town planning historical tradition of Armenia.